



ՈՐՈՇՔ ԵՆ ՄԱՅՐ ԱԹՈՒԻ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐԸ ԵՒ ԻՆՁ Է ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ ԺՈՂՈՎԸ

Հրաչ Չիլինկիրեան





Նորին
Պատրիարք
Մանուկեան



Սահակ
Պատրիարք
Մաշայեան



Արգար Եպս.
Յովակիմեան



Արրահան Արք.
Սկրտչեան



Անուշաան Եպս.
Շամկոչեան



Աշոտ Եպս.
Մնացականեան



Առաքել Արք.
Զարամեան



Առէն Եպս.
Շահէնեան



Արամ Արք.
Աթեշեան



Արարատ Եպս.
Գալթազեան



Արմաշ Եպս.
Նալբանդեան



Արշակ Արք.
Խաչատրեան



Արտակ Եպս.
Տիգրանեան



Ասազ Արք.
Ասատուրեան



Բագրատ Արք.
Գալտանեան



Գեորգ Եպս.
Սարոյեան



Գրիգոր Եպս.
Խաչատրեան



Դանիէլ Եպս.
Ֆընտղզեան



Եգիկ Արք.
Պետրոսեան



Եգրաս Արք.
Ներսիսեան



Թեոդորոս Եպս.
Չաքարեան



Խաճակ Արք.
Պարսամեան



Խորեն Եպս.
Առաքելեան



Կիրակոս Եպս.
Դաթեան



Կորիւն Եպս.
Բաղդասարեան



Հայկազուն Արք.
Նաճարեան



Մակար Եպս.
Յակոբեան



Մարկոս Եպս.
Յովհաննիսեան



Մեսրոպ Եպս.
Պարսամեան



Միքայէլ Արք.
Աջապահեան



Մկրտիչ Եպս.
Պոռջեան



Մովսէս Արք.
Մովսիսեան



Մուշեղ Եպս.
Բաբայեան



Յակոբ Արք. Գլնճեան



Յովակիմ Եպս.
Մանուկեան



Յովհանն Արք.
Տերտէրեան



Յովհանն Եպս.
Յակոբեան



Նարեկ Եպս.
Աճազեան



Նարեկ Եպս.
Պետրէրեան



Նաաաարդ Արք.
Կճոյեան



Նորվան Արք.
Չաքարեան



Ոսկան Արք.
Գալիազեան



Պարգեւ Արք.
Մարտիրոսեան



Պարթեւ Եպս.
Բարսեղեան



Սեդրոկեւ Եպս.
Իսախանեան



Սեան Արք.
Ղարիպեան



Սիփոս Արք.
Ադամեան



Վազգէն Արք.
Միրզախանեան



Վահան Եպս.
Յովհաննէսեան



Վարդան Եպս.
Նաաաարդեան



Վիգէն Արք.
Լյճազեան



Վրթանէս Եպս.
Արրահամեան



Տարցեւ Եպս.
Յակոբեան



Տիրան Եպս.
Պետրոսեան



Փառէն Արք.
Անտիոսեան



Օշական Եպս.
Կիլիկեան

Որո՞նք են Մայր Աթոռի Եպիսկոպոսները և ինչ է Եպիսկոպոսաց Ժողովը

Դոկտ. Հրաչ Զիլինկիրեան

Վերջին ամիսներուն, Հայաստանի մէջ զարգացող եկեղեցի-պետութիւն յարաբերութիւններու լարուածութեան և մրցակցութեան պատճառով, հայ հասարակութիւնը «Եպիսկոպոսաց Ժողով»ի մասին աւելի շատ բան լսեց, քան երբեւէ անցեալին: Շատեր առաջին անգամ ըլլալով տեղեակ եղան եկեղեցւոյ կեանքին մէջ նման մարմնի մը գոյութեան:

Այս փոքր ուսումնասիրութիւնը կու տայ համառօտ ծանօթացում մը՝ թէ ինչ է Եպիսկոպոսաց Ժողովը, ինչպէս նաեւ կը ներկայացնէ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի եպիսկոպոսներու քանակական պատկերն ու հաւաքական դիմագիծը (profile): (1)

Եպիսկոպոսաց Ժողովը

Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ Եպիսկոպոսաց Ժողովը միայն վարչական ժողով մը չէ, այլ հոգեւոր համախոհութեան, վարդապետական հսկողութեան և եկեղեցական կարգապահութեան մարմին մը:

Եպիսկոպոսաց Ժողովը կոչուած է պահպանելու Եկեղեցւոյ հաւատքի ուղղափառութիւնը, Սուրբ Աւանդութիւնը և դարաւոր կանոնական հաւասարակշռութիւնը: Կը գործէ ոչ թէ իբրեւ իշխանութեան կեդրոն, այլ իբրեւ համատեղ պատասխանատուութեան հարթակ: (2) Ժողովը կը քննարկէ վարդապետական և բարոյական հարցեր, կը նպաստէ միասնական դիրքորոշման ձեւաւորման և կը գործէ իբրեւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի խորհրդակցական մարմին մը, մինչեւ Ազգային Եկեղեցական Ժողովի վերջնական քննարկումն ու որոշումը:

Եկեղեցւոյ կեանքին մէջ եպիսկոպոսներու դերը ունի իր պատմական և կանոնական արմատները: Շահապիվանի Ժողովի (5-րդ դար) կանոնները (3) կը վկայեն, թէ Եկեղեցին վաղ ժամանակներէն իսկ եպիսկոպոսութիւնը ընկալած է ոչ թէ իբրեւ պատուոյ տիտղոս, այլ իբրեւ լրջագոյն և ծանր պատասխանատուութիւն: Դարերու ընթացքին կազմուած Եկեղեցւոյ կանոնները խիստ պատիժներ կը սահմանեն եպիսկոպոսներու վարքագիծին համար՝ ինչպէս կաշառակերութիւն, սիմոնականութիւն (եկեղեցական պաշտօնի կամ շնորհքի առք ու վաճառք) և իշխանութեան չարաշահման պարագաներ: Եպիսկոպոսներ

կրնային զրկուիլ իրենց աթոռեն, իշխանութենեն եւ քահանայական ծառայութենեն, ենթարկուիլ նիւթական տուգանքներու եւ հոգեւոր բացառման: Նոյնիսկ լռութիւնը անարդարութեան դիմաց կը նկատուէր մեղսակցութիւն, իսկ կաշառքով մեղքի քողարկումը՝ կանոնական ծանր յանցանք:

Կանոնները կարեւոր սկզբունք կը բացայայտեն. Եպիսկոպոսական իշխանութիւնը Հայց. Եկեղեցւոյ մէջ երբեք չէ ընկալուած իբրեւ անձնական գերիշխանութիւն, այլ իբրեւ ծառայութիւն Եկեղեցւոյ, որ Քրիստոսի մարմինն է: Եպիսկոպոսը կոչուած է ըլլալ ոչ միայն հովիւ եւ առաջնորդ, այլ նաեւ հաւատքի, բարոյականութեան եւ արդարութեան պատասխանատու պահապան: (4)

Այս իմաստով, Եպիսկոպոսական ժողովը, կաթողիկոսին գլխաւորութեամբ, Եկեղեցւոյ միասնութեան երաշխաւորն է. ան կը միաւորէ թեմերը, կը կանխէ ինքնագլուխ գործելակերպերը եւ կը պահէ Եկեղեցին իբրեւ մէկ կենդանի մարմին, ոչ թէ առանձնացած իշխանութիւններու գումար: Ան չի փոխարինէր Կաթողիկոսի, Գերագոյն Հոգեւոր Խորհուրդի կամ թեմական առաջնորդներու կանոնական իշխանութիւնը, այլ կը գործէ անոնց հետ համատեղ՝ հոգեւոր հաւասարակշռութեան մէջ: (5)

-
1. Օգտագործուած աղբիւրներ՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ծիսական *Օրացոյց 2025*; Մայր Աթոռի [կայքէջ](#) վրայ գետեղուած Եպիսկոպոսներու կենսագրութիւնները, տեսնուած [13 Յուլիս 2025-ին](#) :
 2. Ի դէպ՝ կաթողիկոսը կ'օծուի 12 (կամ առնուազն 3) Եպիսկոպոսներու ձեռամբ, իսկ Կաթողիկոսը կ'օծէ անհատ Եպիսկոպոսներ:
 3. Շահապիվանի ժողովի կանոնները կը բաղկանայ 20 յօդուածներէ: Եպիսկոպոսի հետ առընչուող կանոններուն համար, տես, օրինակ, Ա, ԺԶ, եւ Ի յօդուածները: Հմմտ. Հ. Ն. Ակիւնեան, [«Շահապիվանի ժողովի կանոնները»](#). *Հանդէս Ամսօրեայ*, Թիւ 4-12, 1949, էջ 79-170.
 4. *Կանոնագիրք Հայոց*. Ա. հատոր (1964), Բ. հատոր (1971). Աշխատասիրութեամբ Վազգէն Հակոբյանի. Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Հրատարակություն, Երեւան:
 5. Յակոբ Ներսոյեան, *Դիտողութիւններ. «Կանոնադրություն Հայաստանեայց Եկեղեցու» Նախագիծի Մասին*. Երուսաղէմ, 2001. Աւելի լայն շրջագիծի մէջ, Ներսոյեան կը բացատրէ (էջ 37)՝

«Կաթողիկոսը կամ Եպիսկոպոսապետը պարզապէս առաջինն է հաւասարներու մէջ: Սուրբգրական անտարակուսելի հիման վրայ Եպիսկոպոսապետը Եպիսկոպոսական ժողովի գործադիր պետն է: Իրաւասութիւններ իրեն կը տրուին կամ կը ստանայ իբր այդ: Այս իրաւասութիւնները կը պատկանին Եպիսկոպոսական դասուն, իմաստով մը փոխ տրուած կաթողիկոսին, գործածելու համար Եպիսկոպոսական ժողովի բացակայութեան՝ այդ ժողովի կամքին եւ տնօրինութեանց համաձայն: Կաթողիկոսը ունի իր իրաւասութիւնները որպէս ներկայացուցիչը Եպիսկոպոսական դասու ամբողջութեան, եւ իբր այդ իր որոշումները կ'առնեն ոյժ ուրիշ անհատ Եպիսկոպոսի կամ որեւէ հաւատացեալի վրայ՝ այն իմաստով որ ամբողջութիւնը աւելի է քան իր մասերու կուտակումը: Եպիսկոպոսներէն մէկ աստիճան վեր կ'եցած ըլլալու սխալ համոզումին արմատը պէտք է փնտռել Ֆեոդալական կարգավիճակին մէջ:»

Վիճակագրություն


Եպիսկոպոսաց դասի տարիքային բաշխումը

Եպիսկոպոսաց դասի տարիքային բաշխման տուեալները յստակօրեն ցոյց կու տան, որ փորձառու եւ տարեց եպիսկոպոսները գերակշռող են: Ամենամեծ խումբը, ընդհանուրին 30%-ը, կը կազմէ 60-ական տարիքի մեջ գտնուող եպիսկոպոսները: Այս կը վկայէ, որ կազմին գրեթէ մէկ երրորդը կը մօտենայ հանգստեան տարիքի:

Միջին սերունդը կը գտնուի 40-ական եւ 50-ական տարիքի մեջ՝ ներկայացնելով հաւասար բաժիններ՝ իւրաքանչիւրը 23 տոկոս, եւ միասին կը կազմեն ամբողջ դասին 46%-ը, այսինքն եպիսկոպոսներուն գրեթէ կէսը կը գտնուի իր գործունէութեան բեղուն փուլին մեջ:

Միւս կողմէ, 70-էն վեր տարիք ունեցողները կը կազմեն զգալի բաժին մը՝ ընդհանուրին 25%-ը, ուր 16%-ը կը պատկանի 70-ականներուն, իսկ 9%-ը՝ 80-ականներուն, որ ցոյց կու տայ աւագ սերունդի կարեւոր ներկայութիւնը եւ անոնց կուտակուած փորձառութեան կարեւոր դերը:

Ընդհանուր վիճակագրութիւնը ցոյց կու տայ, որ եպիսկոպոսներու մեծամասնութիւնը՝ 55%-ը, 60 տարեկանէն վեր է, այսինքն դասը մեծ մասամբ կը բաղկանայ բազմամեայ փորձառութիւն եւ երկար ծառայութիւն ունեցող եպիսկոպոսներէ:




N = 56 Մայր Աթոռի Եպիսկոպոսաց Դասը, Հրաչ Չիլինկիրեան, 2025

Եպիսկոպոսաց դասի ծննդավայրերու պատկերը

Աշխարհագրական ծագումի վիճակագրության պատկերը ցոյց կու տայ, որ Եպիսկոպոսներուն գրեթէ կէսը՝ 49%-ը, ծնած է Հայաստան, ուր Մայր Հայրենիքը կեդրոնական դեր կը խաղայ որպէս հոգեւորականութեան հիմնական աղբիւր: Միեւնոյն ժամանակ, Միջին Արեւելքի երկիրներուն մէջ ծնած եպիսկոպոսները կը կազմեն շատ մեծ բաժին մը՝ 40%, հաստատելով յատկապէս Միջին Արեւելքի աւանդական հայկական համայնքներուն երբեմնի կենսական դերը հոգեւորականներու պատրաստութեան կարեւոր գործին մէջ:


Նկատի ունենալով վերջին տասնամեակներուն Միջին Արեւելքի հայկական համայնքներու նօսրացումը, Հայց. Եկեղեցւոյ առջեւ կանգնած մեծ հարցերէն մէկը այն է, թէ յառաջիկայ տասնամեակներուն սփիւռքի հր համայնքները հոգեւորականներ պիտի հայթայթեն:



N = 56 Մայր Աթոռի Եպիսկոպոսաց Դասը, Հրաչ Զիլինկիրեան, 2025

Եպիսկոպոսաց դասի կրթական մակարդակը

Ըստ տուեալներու, 57 եպիսկոպոսներէն 30-ը ճեմարանական ուսումէն անդին բարձրագոյն ուսման տիտղոսներ ունի (Մագիստրոս կամ Դոկտորական): Մեծագոյն խումբը կը կազմեն Մագիստրոսի աստիճան ունեցող եպիսկոպոսները, որոնք կը ներկայացնեն ընդհանուրին 32%-ը: Դոկտորական աստիճան ունեցողները կը կազմեն 14%: Անոնց կը յաջորդեն գիտութիւններու թեկնածուի աստիճան ունեցողները՝ 7%, որոնք կը լրացնեն ընդհանուր գիտական պատկերը: Այս բաշխումը կը պարզէ, որ Եպիսկոպոսաց դասին 53%-ը ունի բարձրագոյն գիտական աստիճաններ (մագիստրոս, դոկտոր կամ թեկնածու), ինչ որ կը շեշտէ կազմին լուրջ գիտական ներուժը: Բարձրագոյն տիտղոս ունեցողներուն ջախջախիչ մեծամասնութիւնը իր ուսումը ստացած է եւրոպական եւ ամերիկեան համալսարաններու մէջ:




N = 56 Մայր Աթոռի Եպիսկոպոսաց Դասը, Զրաչ Զիլնկիրեան, 2025

Եպիսկոպոսական պաշտոններու բաշխումը

Եկեղեցւոյ նուիրապետական կառոյցին մէջ եպիսկոպոսներուն պաշտոններու բաշխումը ցոյց կու տայ, որ եպիսկոպոսներու մեծամասնութիւնը՝ 58%-ը, կը վարէ թեմակալ առաջնորդի պաշտօն: Իսկ դասին 39%-ը ներգրաւուած է վարչական կամ եկեղեցական այլ պատասխանատուութիւններու մէջ: Եպիսկոպոսաց դասին մէջ կան երկու (4%) պատրիարքներ՝ Երուսաղէմի եւ Պոլսոյ:


Առանձնապէս ուշագրաւ է թեմակալ առաջնորդներու նշանակման ձեւը, որ կը բացայայտէ կառավարման որոշ ձեւաչափ մը: Վիճակագրութիւնը ցոյց կու տայ, որ առաջնորդներու 64%-ը նշանակուած է ուղղակիօրէն Կաթողիկոսին կողմէ, մինչ միայն 36%-ը ընտրուած է թեմական մակարդակով: Պարզուած ընդհանուր պատկերը ցոյց կու տայ, որ եկեղեցւոյ կառոյցը կը բնորոշուի խիստ կեդրոնացումով:



N = 56 Մայր Աթոռի Եպիսկոպոսաց Դասը, Հրաչ Չիլինկիրեան, 2025

Եպիսկոպոսական ծառայութեան ժամանակաշրջանը

Այս տուեալները կը ներկայացնեն եպիսկոպոսներու փորձառութեան մակարդակը՝ հիմնուած անոնց ձեռնադրութենէն ի վեր անցած տարիներուն վրայ, եւ կը բացայայտեն կայուն, երկարամեայ ծառայութիւն ունեցող նուիրապետական կազմի մը պատկերը: Ամենամեծ խումբը կը կազմեն այն եպիսկոպոսները, որոնք 10+ տարուան ծառայութիւն ունին, որոնք կը ներկայացնեն ընդհանուրին 32%-ը, այսինքն՝ գրեթէ մէկ երրորդը արդէն ունի աւելի քան տասնամեայ փորձառութիւն այս բարձրագոյն աստիճանին մէջ: Անոնց կը յաջորդեն 20+ տարուան ծառայութիւն ունեցողները՝ 26%, որոնք կը ներկայացնեն աւելի տարիքոտ եւ փորձառու սերունդը՝ երկու տասնամեակէ աւելի ծառայութեան պատմութեամբ: Նոր ձեռնադրուած եպիսկոպոսները, որոնք ընդամենը 1-2 տարուան փորձառութիւն ունին, կը կազմեն 18%: Այս պատկերը կը լրացնեն ամենէն փորձառու աւագ ծառայողները, որոնց 16%-ը ունի երկարամեայ ծառայութեան վաստակ, ուր 11%-ը ունի 30+ տարուան, իսկ 5%-ը՝ 40+ տարուան եպիսկոպոսական ծառայութիւն:




N = 56 Մայր Աթոռի Եպիսկոպոսաց Դասը, Հրաչ Չիլինկիրեան, 2025

Եպիսկոպոսական ձեռնադրութիւններու ժամանակագրութիւնը

Այս տուեալները կը բացայայտեն, թէ ո՛ր տասնամեակներուն տեղի ունեցած են ներկայիս գործող եպիսկոպոսներու ձեռնադրութիւնները: Առանցքային է 2010-ական տասնամեակը, երբ ձեռնադրուած են գործող եպիսկոպոսներու 39%-ը, որ կը վկայէ, թէ վերջին 10–15 տարիներուն, նոր սերունդի մը մուտքով, զգալիօրէն թարմացած է եկեղեցական վերնախաւը: Անոր կը յաջորդեն 2000-ական թուականները, երբ ձեռնադրուած է դասին 23%-ը, այսինքն այն եպիսկոպոսները, որոնք այսօր ունին միջինէն բարձր փորձառութիւն՝ մօտաւորապէս 15–25 տարուան ծառայութեան ճանապարհ անցած: Նաեւ զգալի բաժին մը՝ 21%-ը, ձեռնադրուած է 1990-ական թուականներուն, Հայաստանի անկախութեան առաջին տասնամեակին, որ պատմական կարեւոր շրջադարձ էր եկեղեցւոյ վերակազմակերպման համար:

Այս պատկերը կը լրացնէ աւագ սերունդը, որ կը ներկայացնէ 1980-ականներուն եւ աւելի կանուխ ժամանակաշրջաններուն ձեռնադրուած եպիսկոպոսները: Ընդհանուրին 17%-ը կը պատկանի «խորհրդային շրջանի» կազմին, ուր 12%-ը ձեռնադրուած է 1980-ականներուն, իսկ 5%-ը՝ 1970-ականներուն, եւ անոնք կը մարմնաւորեն նախորդող տասնամեակներու հոգեւոր աւանդութիւնը, յիշողութիւնը եւ պատմական փորձառութիւնը:



N = 56 Մայր Աթոռի Եպիսկոպոսաց Դասը, Հրաչ Չիլինկիրեան, 2025

Մայր Աթոռի Եպիսկոպոսաց Դասը (ըստ 2025 թվականի տուեալներով)

Անուն (ըստ ազգություն)	Պաշտոն	Ենթակայ	Ծն. թվական	Տարիք (2025)	Քնն. Ձեռնադրույթի ևս	Եպիսկ. Ձեռնադրույթի ևս	Ծառայության տարիներ	Բարձրագույն ուսման վայր	Տիտղոս
Նուրիան Արք. Մանուկեան	Պատրիարք Երուսաղեմի	Սուրիա	1948	77	1971	1999	26	New York	Masters
Սահակ Արք. Մաշալեան	Պատրիարք Կ. Պոլսոյ	Թուրքիա	1962	63	1992	2008	17	Dublin	Masters
Ոսկան Արք. Գալիպեան	հանգստեան կոչուած	Լիբանան	1941	84	1965	1982	43	Melborne	Masters
Նորվան Արք. Չաքարեան	հանգստեան կոչուած	Լիբանան	1940	85	1968	1982	43	Paris	Masters
Աւագ Արք. Ասատուրեան	հանգստեան կոչուած	Իրաք	1942	83	1977	1982	43	Rome	Doctorate
Սեան Արք. Ղարիբեան	Լուսարարապետ, Երուսաղեմ	Լիբանան	1940	85	1968	1988	37		
Պարգեւ Արք. Մարտիրոսեան	հանգստեան կոչուած	Ատրայեճան	1954	71	1985	1988	37	Leningrad	
Խաժակ Արք. Պարսամեան	Պատուիրակ, Վատիկան	Թուրքիա	1951	74	1971	1990	35	Rome	Masters
Յակոբ Արք. Գլնճեան	Առաջնորդ, Ուրուկուայի Թեմ	Սուրիա	1955	70	1976	1990	35	Regensburg	Masters
Յովնան Արք. Տերտրեան	Առաջնորդ, ԱՄՆ Արեւմտեան Թեմ	Լիբանան	1957	68	1980	1990	35	Oxford	Masters
Վիգէն Արք. Այազեան	Միջեկեղեցական ներկայացուցիչ ԱՄՆ	Թուրքիա	1951	74	1971	1992	33	Fribourg	Doctorate
Եզնիկ Արք. Պետրոսեան	Հրգեոր տեսուչ, Յունաստան	Վրաստան	1955	70	1973	1997	28	Athens	Doctorate
Նաւասարդ Արք. Կոնյան	Առաջնորդ Փոխ. Արարատեան Թեմ	Հայաստան	1957	68	1987	1997	28		
Աբրահամ Արք. Մկրտչեան	Առաջնորդ, Վայոց Ձորի Թեմ	Հայաստան	1961	64	1987	1997	28	Երևան	Masters
Նաթան Արք. Յովհաննիսեան	Մայր Աթոռ, Արարողակարգային բաժին	Հայաստան	1955	70	1988	1997	28		
Առաքել Արք. Զարամեան	Առաջնորդ, Կոտայքի Թեմ	Հայաստան	1963	62	1989	1997	28		
Արամ Արք. Աթեռեան	Կ. Պոլսոյ Պատրիարքութիւն	Թուրքիա	1954	71	1976	1999	26		
Փառն Արք. Անտոնիան	հանգստեան կոչուած	Լիբանան	1939	86	1960	2000	25		
Եզրաս Արք. Ներսիսեան	Առաջնորդ, Ռուսաստանի Թեմ	Հայաստան	1959	66	1985	2001	24		
Սիօն Արք. Արամեան	Առաջնորդ, Արմաւիրի Թեմ	Իրան	1963	62	1987	2001	24		
Միգայել Արք. Աջապահեան	Առաջնորդ, Շիրակի Թեմ	Հայաստան	1963	62	1988	2001	24	Rome	Masters
Մովսէս Արք. Մովսիսեան	Առաջնորդ, Կրասնոդարի Թեմ	Հայաստան	1964	61	1991	2001	24	Zagorsk	Թեկնածու
Վազգէն Արք. Միրզախանեան	Առաջնորդ, Բայթեան երկիրներու Թեմ	Իրան	1965	60	1991	2003	22		
Բազրատ Արք. Գալստանեան	Առաջնորդ (սանեցուած)	Հայաստան	1971	54	1995	2003	22	Montreal	Masters
Արշակ Արք. Խաչատրեան	Մայր Աթոռ, դիւանապետ	Հայաստան	1973	52	1997	2004	21	Երևան	Masters
Հայկազուն Արք. Նաճարեան	հանգստեան կոչուած	Սուրիա	1952	73	1975	2001	14	New York	Masters
Աշոտ Եպս. Մնացականեան	Առաջնորդ, Եգիպտոսի Թեմ	Հայաստան	1972	53	1996	2006	19		
Արմաշ Եպս. Նալբանդեան	Առաջնորդ, Դամասկոսի Թեմ	Սուրիա	1973	52	1998	2006	19		
Արարատ Եպս. Գայթեգճեան	Մայր Աթոռ	Լիբանան	1962	63	1986	2006	19		
Անուշաան Եպս. Ժամկոչեան	Հրգեոր տեսուչ, Երևանի Մայր Եկեղեցի	Հայաստան	1971	54	1995	2006	19	Westfallen	Masters
Մարկոս Եպս. Յովհաննիսեան	Առաջնորդ, Ուկրաինայի Թեմ	Հայաստան	1973	52	2000	2006	19		
Վորանէ Եպս. Աբրահամեան	Առաջնորդ, Արցախի Թեմ	Արցախ	1962	63	1988	2008	17		
Արտակ Եպս. Տիգրանեան	Մայր Աթոռ, Վանորոյց Տեսչութիւն	Հայաստան	1971	54	1995	2010	15		
Մկրտիչ Եպս. Պաշտեան	Առաջնորդ, Արագածոտնի Թեմ	Հայաստան	1975	50	2001	2010	15	Cardiff	Masters
Յովակիմ Եպս. Մանուկեան	Առաջնորդ, Մեծն Բրիտանիոյ Թեմ	Հայաստան	1976	49	2001	2010	15	Moscow	Թեկնածու
Վահան Եպս. Յովհաննիսեան	Մայր Աթոռ, Գարեգին Ա. Կրթ. Կեդրոն	Իրաք	1963	62	1990	2011	14	New York	Doctorate
Տարթեւ Եպս. Յակոբեան	Առաջնորդ, Ռումանիոյ Թեմ	Իրաք	1965	60	1993	2011	14		
Գեորգ Եպս. Սարգսեան	Առաջնորդ, Մասեացոսնի Թեմ	Հայաստան	1977	48	2001	2011	14	Yerevan	Թեկնածու
Մուշեղ Եպս. Բաբայեան	Մայր Աթոռ, Վարդապետեանական բաժին	Հայաստան	1978	47	2002	2011	14	Moscow	Թեկնածու
Յովնան Եպս. Յակոբեան	Առաջնորդ, Գուգարաց Թեմ	Հայաստան	1978	47	2003	2011	14		
Նարեկ Եպս. Պերպլեան	Առաջնորդ, Պրագիիոյ Թեմ	Լիբանան	1967	58	1992	2014	11	Virginia	Doctorate
Աբգար Եպս. Յովակիմեան	Առաջնորդ, Գանատայի Թեմ	Վրաստան	1972	53	1996	2014	11	Salzburg	Masters
Վարդան Եպս. Նաւասարդեան	Առաջնորդ, Աստրախիոյ Թեմ	Հայաստան	1979	46	2004	2019	6		
Սերովբէ Եպս. Խաչանեան	Առաջնորդ, Գերմանիոյ Թեմ	Իրան	1963	62	1987	2019	6		
Դանիէլ Եպս. Ֆրնտրեան	Գեորգեան ճեմարան, Մայր Աթոռ	ԱՄՆ	1962	63	1997	2019	6	Rome	Doctorate
Տիրան Եպս. Պետրոսեան	Պատուիրակ, Կեդ. Երոզայ	Հայաստան	1981	44	2003	2019	6	Vienna	Doctorate
Օշական Եպս. Կրկնիկեան	Առաջնորդ, Իրաքի Թեմ	Լիբանան	1960	65	1987	2019	6	Indiana	Masters
Թեոդորոս Եպս. Չաքարեան	Երուսաղեմի Պատրիարքութիւն	Հայաստան	1969	56	1995	2023	2		
Մերուզ Եպս. Պարսամեան	Առաջնորդ, Արեւելեան ԱՄՆ	Հայաստան	1981	44	2003	2023	2	Strasbourg	Masters
Կորիւն Եպս. Բաղդասարեան	Երուսաղեմի Պատրիարքութիւն	Հայաստան	1980	45	2003	2023	2	Jerusalem	Masters
Կիրակոս Եպս. Դաթեան	Առաջնորդ, Վրաստանի Թեմ	Վրաստան	1982	43	2006	2023	2		
Առն Եպս. Շահինեան	Առաջնորդ, Արմաւիրի Թեմ	Իրաք	1970	55	2000	2024	2	Rome	Doctorate
Գրիգոր Եպս. Խաչատրեան	Առաջնորդ, Ֆրանսայի Թեմ	Հայաստան	1974	51	2000	2024	1		
Նարեկ Եպս. Աւագեան	Առաջնորդ, Արթիկի Թեմ	Հայաստան	1979	46	2003	2024	1		
Մակար Եպս. Յակոբեան	Առաջնորդ, Սիւնեաց Թեմ	Հայաստան	1979	46	2004	2024	1		
Պարթեւ Եպս. Բարսեղեան	Առաջնորդ, Գեղարքունեաց Թեմ	Հայաստան	1982	43	2007	2024	1		
Խորեն Եպս. Առաքելեան	Առաջնորդ, Յունաստանի Թեմ	Հայաստան	1980	45	2009	2024	1		

N = 56 Մայր Աթոռի Եպիսկոպոսաց Դասը, Հրաչ Չիլինկիրեան, 2025

Որո՞նք են Մայր Աթոռի Եպիսկոպոսները և ի՞նչ է Եպիսկոպոսաց Ժողովը

Սույն կարճ ուսումնասիրությունը համառոտ կերպով կը ներկայացնէ Եպիսկոպոսաց Ժողովի էությունը և գործառոյթը, ինչպէս նաեւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Եպիսկոպոսութեան քանակական պատկերը և հաւաքական դիմագիծը:

Հրաչ Զիլինկիրեան՝ հասարակաբան, սփիւռքագետ և համալսարանական դասախօս է: Տասներկու տարի պաշտօնավարած է Օքսֆորտի համալսարանի Ասիական և Մերձաւոր Արեւելքի ուսմանց ամպիոնին մէջ, իսկ անկէ առաջ՝ տասը տարի՝ Քեմբրիջի համալսարանին մէջ: 2021 թուականէն ի վեր Փարիզի INALCO համալսարանի հայկական ամպիոնին մէջ դասախօս է: 2019-2022 թթ. ղեկավարած է Կիլլաէնկեան Հիմնարկութեան «Հայկական Սփիւռքի Հարցախոյզ» խորագրով մեծածաւալ ուսումնասիրական ծրագիրը: Հրատարակած է բազմաթիւ գիտական ուսումնասիրութիւններ և յօդուածներ, ինչպէս նաեւ հեղինակն է շարք մը մենագրութիւններու (www.hratch.info):

eMust | Իմաստ

Think & Do Tank

February 2026